ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--հունիսի 2021 թվականի №--Ա
ք. Երևան

«ԱՐԹԻԿԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ «ԱՐԹԻԿԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, հաշվի առնելով «ԱՐԹԻԿԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2021 թվականի մայիսի 14-ի հայտը և մայիսի 19-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ԱՐԹԻԿԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել «Արթիկի արևային կայան» արևային էլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի վարչական տարածք) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2043 թվականի հունիսի 3-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2023 թվականի հունիսի 3-ը:
2. Հաստատել «ԱՐԹԻԿԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրվող «Արթիկի արևային կայան» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունիսի 3-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հունիսի 2021թ.